ՊԱՇՏՊԱՆԻՉ ՊԱՏԵՐ

Նպատակ

Այգեպար գյուղի դպրոցը պաշտպանել սահմանից և երեխաներին հնարավորություն տալ սովորելու անվտանգ միջավայրում

Գործողություններ

- Կառուցել 70 մ երկարությամբ և 3 մ բարձրությամբ պատ Այգեպար գյուղի դպրոցի շուրջը
- Կառուցել 20 մ երկարությամբ և 3 մ բարձրությամբ պատ դպրոց տանող ճանապարհին

Ծրագրի նկարագրությունը

Այգեպարը Շամշադինի 16 գյուղական համայնքներից մեկն է և ունի 648 բնակիչ: Գյուղի դպրոցում կա 54 աշակերտ, իսկ մանկապարտեզում 20-25 երեխա: Ապրուստ վաստակելու համար, գյուղացիները իրենց տան տարածքի հողն են մշակում, քանի որ հողամշակման համար այլ անվտանգ վայրեր չկան, դիպուկահարների կրակոցների պատճառով:

Գյուղը շատ մոտ է գտնվում Ադրբեջանի հետ սահմանին. տները գտնվում են սահմանից 100 մ հեռավորության վրա: Մանկապարտեզի ու դպրոցի շենքերը սահմանից հեռու են մոտ 300 մ-ով: Ամեն շաբաթ լուրերով հայտնում են սահմանի վրա հրադադարի ռեժիմի խախտման մասին, և կրակոցներն ուղղված են լինում քաղաքացիական շինությունների և դպրոցի ուղղությամբ: Դպրոցը մի քանի անգամ արդեն վնասվել է, իսկ փամփուշտները պատուհաններից ներս թափանցելով ճակատագրական վտանգի են ենթարկել դպրոցական երեխաների կյանքերը: Դպրոցի դիմացը գտնվող խաղահրապարաում չափազանց վտանգավոր է գտնվել հրազենային կրակոցների պատճառով: Դպրոցի շրջակայքում երեք մետր բարձրություն ունեցող պատը կպաշտպանի դպրոցը փամփուշտներից և երեխաները հնարավորություն կունենան անվտանգ օգտավործել իրենց խաղահրապարակը:

Բյուջե

ԻՆՉ	ԱՇԽԱՏՈՒԺ	ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Մակերեսի պատրաստում	$313.56	-	$313.56
Հիմք	$1,563.38	$4,154.98	$5,718.36
Պատեր	$3,824.16	$6,636.00	$10,460.16

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$16,492.08**